

չի կրցան լաւերնին բռնել, և միայն աս անգամուն եղաւ, որ անոնք ալ աս ա. հաւոր բնակարանին մէջ լացին և անոնցմէ մէկը, Սիմոն կոչկակարը, բարձր ձայնով մը ըսաւ, « Կարծեմ որ աս կանայքը զիս լացընեն պիտի », ետքը թագուհւոյն դառնալով, ըսաւ անոնց. « Երբոր օգոստոսի 10^{ին} ժողովուրդը ջարդել կու տայիք չէիք լար. — Սողովուրդը, պատասխանեց թագուհին, մեր սրտին զգածմանը վրայ շատ խաբուած է », Եւ ամէն բաներէս վերջը թագաւորին խնդրած գրքերը առած իրեն բերի. ինծի հետ ներս մտան քաղաքական պաշտօնեաներն ալ, ըսելու համար թագաւորին որ կրնար նորէն իր ընտանիքը տեսնել, ասով իմացուցի ես ալ պաշտօնէից որ նորէն պիտի սկսէի ծառայել արքայորդւոյն ու իշխանուհիներուն, և թոյլ տուին ինծի. և անանկով առիթ ունեցայ թագուհւոյն պատմելու միշտ ինչ որ կը հանդիպէր թագաւորին իրենց բաժնուէլէն վերջը :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Վայրի կենդանեաց մեկամարտութիւն ի հնդկա :

Չկայ բան մը որ հնդկաստանի ժողովուրդը այնչափ զուարճացընէ, ինչպէս վայրի կենդանեաց մեկամարտութիւնը, և այս փափաքով հնդիկք ամէն կողմանէ խուռն բազմութեամբ կը վազեն աս հանդէսը տեսնելու համար : Ենգղիացի ճանապարհորդ մը, որ իրեք տարի հնդկաստան կեցած էր, ահանատես եղաւ աս զարմանալի հանդիսին, և հետեւեալ նկարագրութեան հեղինակ կը ինքն է : Երկէսը ընդարձակ գաւթի մը մէջն էր, որուն չորս կողմը հանդիսատեսաց համար տեղեր պատրաստուած էին : Կաւթին մէջտեղը երկըթէ մեծ վանդակ մը կար, գրեթէ 50 ոտք բարձրութեամբ, ու 60 ոտք տրամագծով : () անազան դռնակներով կըրկէսին հետ վերաբերութիւն ունէին

շատ մը խորշեր, որոնց մէջ ամենէն վայրի գազանները փակուած էին : Երկէսին մէկ կողմն ալ բազմաթիւ գոմէշներ կային, առանձին փակուած իրարու քով, որոնք ահաւոր տեսարան մը կը ձևացընէին իրենց սև սև գլուխներովը, ու ահաւոր եղջիւրներով : Եւ կատաղի կենդանիները՝ գաւազնին իրենց կեցած վանդակին կռթնցուցած, անշարժ և լռիկ՝ պատերազմին սկսելուն կը սպասէին : Յանկարծ դռները բացուեցան, ու մէկէն երկու վագր, երկու ընձառիւծ, երկու արջ կրկէսին մէջ տեղը վազեցին. ան միջոցին բոլոր գոմէշներն ալ դուրս յարձակեցան, ու շիտակ արջերուն վրայ վազեցին, անոնք սարսափած գոմէշներուն կատաղի եղջիւրներէն, սկսան փախչիլ ու ճանկըռտելով վանդակներուն վրայ ելլել :

Իսկ վագրերը քաջութեամբ պաշտպանեցին իրենք զիրենք, թէպէտ և կռիւր անհաւասար էր, վասն զի գոմէշները խիստ բազմաթիւ էին : Եւ վագրերէն մէկը որ ուրիշներէն աւելի գեղեցիկ էր տեսքով, գլխուն վրայ հարուած մը առաւ ան միջոցին յորում ինքը գոմէշի մը վիզը պլոււած էր, ու անոր վզին տակ կը կախուած մորթը ճեղքեց : Եւ այց վագրը ուրիշ հարուած մը առնելով, գետինն ընկաւ մնաց, ու գոմէշներէն կոխ կըռտուելով, ետքի շունչը փչեց : Իսկ ընձառիւծները այն միջոցին հանդարտ կեցեր էին :

Եւ ինչ ատենէն ռնգեղջիւր մը տեսնուեցաւ կրկէսին մէջ, որուն պահապանները կը քշէին զինքը վագրին վրայ յարձրկելու համար, որն որ շղթայի մը կապուած էր. կամաց կամաց սկսաւ ռնգեղջիւրը մօտենալ վագրին, աղէկ մը դիտելով զինքը, առանց ամենեւին թշնամութիւն մը ցուցընելու : Իսկ վագրը կարծելով թէ ռնգեղջիւրը վրան պիտի յարձրկի, սկսաւ յանկարծ մըռմուռ ու ոլորել իր շղթան, և աչքերը շիտակ իր թշնամուոյն վրայ տնկել : Եւ որ տեսաւ ռնգեղջիւրը, թողուց մէկէն վագրը, ու վազելով սկսաւ փախչիլ կրկէսին քովընտի մէկ ճամբէն. բայց վա-

զելուն ժամանակ՝ դժբաղդաբար պատ-
գարակ մը շրջեց, մէջի գտնուած կին
մարդովը զոր կը տանէին անկից, վասն
զի այն սոսկալի տեսարանին ներկայ ըլ-
լալով՝ մեծ այլայլութիւն զգացեր էր:

Ինչ միջոցին գոմէշ մը ու մէկ վագր
մը վազեցին յանկած կրկէսին մէջ, ու
կատաղաբար յարձրկեցան իրարու վը-
րայ: Վագրը գոմէշին վիզը պլուեւելով,
անոր վզին վրայ խոշոր վերք մը բացաւ.
բայց թշնամին իր եղջիւրովը անանկ
հարուած մը տուաւ վագրին, որ մէջքը
ջախջախելով հեռու տեղ մը ձգեց մար-
մինը: Եւ յետո՛ւ վագրը ալ բոլորովին ուժէ
էյնալով, չի կրցաւ նորէն թշնամոյն
դէմ ճակատիլ: Իսկ միջոցին պզտի փիղ
մը յարձրկեցաւ ընձառիւծին վրայ,
բայց պատերազմը շատ չտևեց, որովհե-
տև փիղը ահաւոր հարուած մը տալով
իր թշնամոյն, կիսամեռ գետինը փռեց
զինքը:

Իսոնցմէ ետքը ամէնքը պատրաս-
տուեցան փղերուն կռիւը տեսնելու:
Սումդի գետին եզերքը արդէն պատրաս-
տուած էր լայն ու ընդարձակ կրկէս մը,
ամենայն կերպով յարմար՝ աս վիթ-
խարի կենդանեաց կռուոյն համար:
Բազմութիւն փիղերու ժողովուած էին
կրկէսին մէջ, և սպառնալից աչքով
կ'երթային ու կուգային:

Փղապանները կենդանեաց կռնակը
հեծած էին մասնաւոր պահպանակի մը
մէջ ուժով գոցուած, որպէս զի կռուին
ժամանակ չըլլայ թէ կերպով մը փղին
կռնակէն վար իյնան: Եւրաքանչիւր
փիղ երկու կամ իրեք մարդ ունէր հե-
տը, և ամէնքն ալ տէգով զինեալ՝ ուս-
կից շատ կը վախնան աս կենդանիք:

Ինչ ատենէն երկու փիղ երևցան,
ու սկսան իրարու վրայ դիմել. և քանի
որ մէկմէկու կը մօտենային՝ այնչափ ա-
ւելի ընթացքնին կ'երագէին, բայց
սրտերնին ալ կը նետէր միանգամայն.
իրարու քով հասնելէն ետքը, երկու օձ
իրարու հետ կպածի պէս, պատիճնին
պլլեցին իրարու հետ, և ան միջոցին
ամենայն կատաղութեամբ կռուեցան,
ինչուան երկուքէն մէկը տկարանալով

ստիպուեցաւ փախչիլ. բայց թշնամին
զինքը չթողլով ետևէն ինկաւ, ու պա-
տիճովը այնպիսի ուժով հարուած մը
տուաւ անոր, որ վրայի եղած մարդն
ալ դուրս ընկաւ իր տեղէն, բայց բա-
րեբաղդաբար փիղերէն հեռու էյնա-
լով, քիչ փնասով ազատեցաւ ձեռքեր-
նէն: Իսոր նման ուրիշ հինգ կամ վեց
կռիւներ ալ եղան, բայց քիչ փնասով,
վասն զի աս կենդանիները այնպիսի
հնարագիտութիւն մը ունին որ շուտով
կ'իմանան թէ արդեօք իրենք չէ նէ
թշնամինն աւելի տկար են, որով կռի-
ւը ամենևին չերկրննար:

տնտեսական

ԱՐՈՒԵՍՏ

Կանկիի ու քրանի սպիտակացումն ¹:

Կանեփը ու քթանը բամբակէն ա-
ւելի գունաւորիչ նիւթ կ'ունենայ և
գոյնը թափելով իրեն ծանրութեան
գրեթէ իրեքին մէկը կը կորուսնէ.
(իսկ բամբակին կորուստը հազիւ քսա-
նին մէկ է): Իրեն բնական գոյնը հա-
ցի միջուկի գոյն կ'ըլլայ. բայց ինչպէս
որ յայտնի է, կանեփը իր ծղօտէն զա-
տելու համար սովորաբար թրջոց կը
դրուի: Կանեփը ու քթանը երկայն
ատեն թրջոց կենալով աղտոտ գոյն մը
կ'առնու, և չճերմկիր ոչ եփ ջրով, և
ոչ թթուաջրով. բայց ալքալեան լու-
գարանի մէջ թրջելէն ետքը՝ երկայն
ատեն օդի մէջ փռուելով բոլորովին
կը գունաթափի. և կատարելապէս
ճերմկեցնելու համար այլ և այլ անգամ
քլորաջրի մէջ թաթխելու ու արևու
մէջ փռելով չորցնելու է, ինչպէս որ
ասկէ առջի յօդուածին մէջ բամբակի
համար ըսինք: — Իսկ այն կանեփն ու
քթանը որ առանց թրջոց դնելու իր
ծղօտէն կը զատուի, շատ աւելի ճեր-

¹ Տե՛ս երես 97: